ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՎ/14/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ ԿՎ/14/2022 ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «28» հուլիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Նարեկ Համբարձումյանի և Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով ՀՀ վարչական դատարանի դատավոր Անի Գրիգորի Հարությունյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում սխալ և ոչ ամբողջական ներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մայիսի 27-ի թիվ ՎԻՎ/27/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի հիմքով հարուցված 2022 թվականի մայիսի 27-ի թիվ ԿՎ/14/2022 կարգապահական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը.

1.1 Կարգապահական վարույթ հարուցելու առիթ են հանդիսացել 2020 թվականի մարտի 25-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին»

684

օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով իրականացված դատավորների հայտարարագրերի վերլուծության արդյունքում հայտնաբերված խախտումները: Մասնավորապես, ՀՀ վարչական դատարանի դատավոր Անի Հարությունյանն իր կողմից 2021 թվականի հունիսի 3-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր)՝

1) «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում տարեվերջին հայտարարագրել է 1,697,521.00 ՀՀ դրամ և 12,000.00 ԱՄՆ դոլար անկանխիկ դրամական միջոցներ:

Մինչդեռ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Անի Հարությունյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա է եղել 1,923,318.00 ՀՀ դրամ, 2,333,401.00 ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար և 7,771,00 ԱՄՆ դոլար հաշիվների մնացորդներ:

2) Անի Հարությունյանը Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում, հայտարարագրել է 4.66 տոկոս բաժնեմասնակցություն «Գրիար» ՓԲԸ-ում 27,900.00 ՀՀ դրամ արժեքով:

Մինչդեռ, ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի 2021 թվականի հունիսի 29-ի թիվ N3-1454 գրության համաձայն՝ Անի Հարությունյանը «Գրիար» ՓԲԸ-ում ունի 1000 բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 27,900.00 ՀՀ դրամ արժեքով: Բաժնետոմսերի ընդհանուր արժեքը կազմում է 27,900,000.00 ՀՀ դրամ:

3) Անի Հարությունյանը «Գրիար» ՓԲԸ-ում բաժնեմասնակցությունը Հայտարարագրի «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չի հայտարարագրել:

4) Անի Հարությունյանը Հայտարարագրի «Դ. 3 Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային

կառավարման հանձնելը» բաժնում «Գրիար» ՓԲԸ-ի՝ վերջինիս պատկանող բաժնեմասը չի հայտարարագրել:

5) Անի Հարությունյանը Հայտարարագրի «Գ. 1 Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում չի հայտարարագրել 2020 թվականին «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից և «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից համապատասխանաբար 511,200.00 ՀՀ դրամ և 972,000.00 ՀՀ դրամ վարձակալությունից ստացված եկամուտները:

Մինչդեռ, Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Անի Հարությունյանը 2020 թվականին «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից և «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից համապատասխանաբար ստացել է 511,200.00 ՀՀ դրամ և 972,000.00 ՀՀ դրամ վարձակալության դիմաց եկամուտներ:

6) Անի Հարությունյանը «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի բաժնեմասնակցությունը Հայտարարագրի «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չի հայտարարագրել:

Մինչդեռ, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Անի Հարությունյանը 2011 թվականի հոկտեմբերի 11-ից հանդիսանում է «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02602819) 100 տոկոսի բաժնետեր:

1.2 Անի Հարությունյանի կողմից 2022 թվականի մայիսի 26-ին Հանձնաժողով է ներկայացվել գրավոր դիրքորոշում՝ վարչական իրավախախտումների կապակցությամբ:

1.3 Հայտնաբերված առերևույթ իրավախախտումների վերաբերյալ 2022 թվականի մայիսի 27-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/28/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Նշված առերևույթ խախտումների առնչությամբ 2022 թվականի մայիսի 27-ին Հանձնաժողովի որոշմամբ հարուցվել է թիվ N ՎԻՎ/27/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը, ինչպես նաև թիվ ԿՎ/14/2022 կարգապահական վարույթը:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի հունիսի 1-ին, ինչի կապակցությամբ Անի Հարությունյանը պատշաճ ծանուցվել է:

1.6 Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 1-ին իրականացված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում կայացրել է սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 ՀՀ դրամի չափով «Վարչական տույժ կիրառելու մասին» թիվ ՎԻՎ/27/2022 որոշումը:

1.7 Անի Հարությունյանի կողմից 2022 թվականի հուլիսի 8-ին, 13-ին և 27-ին ի պատասխան Հանձնաժողովի կողմից 2022 թվականի հունիսի 2-ին վերջինիս հասցեագրված հայտարարագրերի վերլուծության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների առնչությամբ պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ գրության՝ Հանձնաժողով են ներկայացվել համապատասխանաբար թիվ Մ-2939-2022, թիվ Մ-3013-2022, Մ-3181-2022 գրությունները՝ կից փաստաթղթերով:

2. <u>Վարույթի մասնակցի բացատրությունը</u>.

Անի Հարությունյանը Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրությամբ հայտնել է հետևյալը.

2.1. Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում «Գրիար» ՓԲԸ-ում 27,900.00 ՀՀ դրամ արժեքով 4.66 տոկոս բաժնեմասնակցության վերաբերյալ ներկայացված տվյալների կապակցությամբ հայտնել է, որ «Գրիար» ՓԲԸ-ում իր 4.66 տոկոս բաժնեմասնակցությունն արտահայտվել է 27,900.00 անվանական բաժնետոմսերով՝ յուրաքանչյուրը 1000 ՀՀ դրամ արժեքով, որի ընդհանուր արժեքը 2020 թվականի ընթացքում կազմել է 27,900,000.00 ՀՀ դրամ, սակայն վրիպակի արդյունքում (հաշվի առնելով, որ ծրագիրն ավտոմատ կերպով զրոներ է ավելացնում, փորձել է զրոները պակասեցնել) 27,900,000.00 ՀՀ դրամի փոխարեն նշել է 27,900.00 ՀՀ դրամ:

2.2. Հայտարարագրի «Բ.6.Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

1,697,521.00 ՀՀ դրամ և 12,000.00 ԱՄՆ դոլար անկանխիկ դրամական միջոցներ հայտարարագրելու և ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության միջև առկա անհամապատասխանության հետ կապված Անի Հարությունյանը պարզաբանել է, որ 2020 թվականի ընթացքում իր՝ որպես պետական ծառայողի սոցիալական փաթեթի հաշվին փոխանցվել են գումարներ, որոնք տնօրինելու իրավասություն չի ունեցել՝ հաշվից օգտվելու համար համապատասխան բանկին փաստաթղթերի փաթեթ ներկայացնելու նախապայմանի պատճառով (այդ թվում, օրինակ՝ բժշկական զննություն անցած լինելու մասին տեղեկանք և այլն): Դրամական միջոցը տնօրինելու իրավասություն չունենալու պատճառով այդ գումարի չափը չի ներառվել անկանխիկ միջոցների հանրագումարում: Հնարավոր է համարում, որ իր կողմից հայտարարագրած դրամային հաշիվների մնացորդի 1,697,521.00 ՀՀ դրամ և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված տվյալների համաձայն՝ փաստացի առկա 1,923,318.00 ՀՀ դրամ դրամային հաշիվների մնացորդի տարբերությունը պայմանավորված է վերոնշյալ հանգամանքով: Իսկ դոլարային հաշվի մնացորդների առկայությամբ հայտնում է, որ ներկայացրել է դոլարային հաշիվներին առկա մնացորդների հանրագումարը՝ գումարը ամբողջացնելով՝ հաշվի առնելով, որ ծրագրով տասնորդական կամ հարյուրերորդական թվեր նշելու դեպքում ծրագիրն ավտոմատ կերպով այն բազմապատկում է համապատասխանաբար տասով կամ հարյուրով:

2.3. Ինչ վերաբերում է «Գրիար» ՓԲԸ-ում բաժնեմասնակցությունը Հայտարարագրի «Դ. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չհայտարարագրելուն, այս կապակցությամբ հայտնում է, որ վերոնշյալ ընկերությունում բաժնեմասնակցությունն արդեն իսկ ներկայացված է եղել Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում, և միևնույն տվյալները հետագա բոլոր նույն տվյալների հայտարարագրումը ենթադրող բաժիններում լրացնելու անհրաժեշտությունը բացակայել է:

2.4. Անդրադառնալով «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալը Հայտարարագրի «Դ. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չներկայացնելուն, Անի Հարությունյանը բացատրությամբ

հայտնել է, որ նշված ընկերության գործունեությունը 2014 թվականի ապրիլի 1-ից դադարեցված է եղել հարկային մարմին ներկայացված հայտարարության ուժով և դրանով պայմանավորված իր կողմից Հայտարարագրում համապատասխան տվյալներ չեն ներկայացվել: Վերջինիս կողմից մատնանշված վերոնշյալ փաստական հանգամանքի վերաբերյալ վարչական իրավախախտման գործի վարույթում որևէ ապացույց չի ներկայացվել:

2.5. Արձանագրված՝ Հայտարարագրի «Դ.3 Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում «Գրիար» ՓԲԸ-ի՝ վերջինիս պատկանող բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տվյալ չներկայացնելու առնչությամբ վերջինիս կողմից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթում դիրքորոշում չի ներկայացվել:

2.6. Հայտարարագրի «Գ.1 Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում 2020 թվականի ընթացքում «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից 511,200.00 ՀՀ դրամ վարձակալությունից ստացված եկամուտը չներկայացնելու առնչությամբ Անի Հարությունյանը հայտնում է, որ դա անուշադրության արդյունք է, ինչի մասին դեռևս 2021 թվականի նոյեմբերի 19-ին իր դիմումով հայտնել է, խնդրելով թույլատրել ուղղում կատարել, և որ իր դիմումը մերժվել է Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ Ե-01/1261-2021 գրությամբ:

Ինչ վերաբերում է «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից 972,000.00 ՀՀ դրամ վարձակալության դիմաց ստացված եկամուտը չներկայացնելուն, վերջինս հայտնում է, որ թեև վերոնշյալ ընկերության հետ առկա է եղել վարձակալության պայմանագիր, սակայն «Արս սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից որևէ վարձավճար երբևէ իրեն չի փոխանցվել կամ առձեռն տրվել, ուստի և չէր էլ կարող եկամուտի վերաբերյալ տվյալ ներկայացնել Հայտարարագրի համապատասխան բաժնում:

2.7 Սույն կարգապահական վարույթի շրջանակներում Անի Հարությունյանի կողմից 2022 թվականի հուլիսի 27-ին Հանձնաժողով ներկայացված Մ-3181-2022 գրությամբ

վերջինս վերահաստատել է նշված հանգամանքը՝ ներկայացնելով «Արս սիսթեմս» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 2022 թվականի հուլիսի 7-ին տրված N-0722-07 տեղեկանքն առ այն, որ սեփականության իրավունքով Անի Հարությունյանին պատկանող անշարժ գույքի (Ամիրյան 4/6, 155 տարածք) վարձակալության դիմաց «Արս սիսթեմս» ՍՊ Ընկերության կողմից վերջինիս վարձավճարներ չեն փոխանցվել:

2.8 Կարգապահական վարույթի շրջանակներում Անի Հարությունյանի կողմից 2022 թվականի հուլիսի 8-ին ներկայացված թիվ Մ-2939-2022 գրությամբ վերջինս փաստել է, որ «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» (ՀՎՀՀ՝ 02602819) ՍՊԸ-ի գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է՝ ներկայացնելով Պետական եկամուտների կոմիտեի 2022 թվականի հունիսի 16-ի թիվ 70-3/41994-2022 գրությունը:

2.9 Կարգապահական վարույթի շրջանակներում Անի Հարությունյանի կողմից 2022 թվականի հուլիսի 8-ին ներկայացված թիվ Մ-2939-2022 գրությամբ վերջինս փաստել է, որ «Գրիար» ՓԲԸ-ում ունեցած իր բաժնեմասը հանձնվել է հավատարմագրային կառավարման՝ ներկայացնելով 2019 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում առկա բաժնետոմսի հավատարմագրային կառավարման պայմանագիրը:

2.10 Անի Հարությունյանի կողմից 2022 թվականի հուլիսի 8-ին ներկայացված թիվ Մ-2939-2022 գրությամբ վերջինս փաստել է, որ «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» (ՀՎՀՀ՝ 02602819) ՍՊԸ-ի գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է՝ ներկայացնելով Պետական եկամուտների կոմիտեի 2022 թվականի հունիսի 16-ի թիվ 70-3/41994-2022 գրությունը:

2.11 Անի Հարությունյանի կողմից 2022 թվականի հուլիսի 8-ի թիվ Մ-2939-2022 և հուլիսի 13-ին ներկայացված թիվ Մ-3013-2022 գրություններով Հանձնաժողով ներկայացված պարզաբանումների շրջանակում, վերջինս մատնանշել է այն, որ ներկայացնում է 2017-2020 թվականներին իր անվամբ սպասարկվող բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վերաբերյալ քաղվածքներ:

<u>Որոշումն ընդունելու իրավական և փաստական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը.</u>

3.1 ՀՀ վարչական դատարանի դատավոր Անի Հարությունյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

3.3 Օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը՝ նշելով արժեթղթի տեսակը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն:

3.4 Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտարարագրի **«Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում»** բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը, տոկոսը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

3.5 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայտարարագրի «Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որում հայտարարատու պաշտոնատար անձի ունեցած բաժնեմասը հանձնված է հավատարմագրային կառավարման, կամ հավատարմագրային կառավարչի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, պայմանագրի գործողության ժամկետը:

3.6 Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 41-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ և 13-րդ կետերի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները՝ գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտը, վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եկամուտը հայտարարագրելիս նշվում են՝

1) եկամտի տեսակը,

2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն,

3) եկամտի չափը (գումարը),

4) եկամտի արժույթը:

3.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

3.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական

69

իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

3.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

3.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

3.12 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթում ***հաստատված է համարել,*** որ ՀՀ վարչական դատարանի դատավոր Անի Հարությունյանի կողմից անզգուշությամբ կատարվել են հետևյալ խախտումները.

1. Անի Հարությունյանը 2021 թվականի հունիսի 3-ին ներկայացված Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների

69

մնացորդներ» ենթաբաժնում տարեվերջին հայտարարագրել է 1,697,521.00 ՀՀ դրամ և 12,000.00 ԱՄՆ դոլար անկանխիկ դրամական միջոցներ, մինչդեռ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Անի Հարությունյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա է եղել 1,923,318.00 ՀՀ դրամ, 2,333,401.00 ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար և 7,771,00 ԱՄՆ դոլար հաշիվների մնացորդներ:

2. Անի Հարությունյանը Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում, հայտարարագրել է 4.66 տոկոս բաժնեմասնակցություն «Գրիար» ՓԲԸ-ում 27,900.00 ՀՀ դրամ արժեքով, մինչդեռ, ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի 2021 թվականի հունիսի 29-ի թիվ N3-1454 գրության համաձայն՝ Անի Հարությունյանը «Գրիար» ՓԲԸ-ում ունի 1000 բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 27,900.00 ՀՀ դրամ արժեքով: Բաժնետոմսերի ընդհանուր արժեքը կազմում է 27,900,000.00 ՀՀ դրամ:

3) Անի Հարությունյանը «Գրիար» ՓԲԸ-ում բաժնեմասնակցությունը Հայտարարագրի «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չի հայտարարագրել:

4) Անի Հարությունյանը Հայտարարագրի «Դ. 3 Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում «Գրիար» ՓԲԸ-ի՝ վերջինիս պատկանող բաժնեմասը չի հայտարարագրել:

5) Անի Հարությունյանը Հայտարարագրի «Գ. 1 Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում չի հայտարարագրել 2020 թվականին «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից և «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից համապատասխանաբար 511,200.00 ՀՀ դրամ և 972,000.00 ՀՀ դրամ վարձակալությունից ստացված եկամուտները, մինչդեռ, Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Անի Հարությունյանը 2020 թվականին «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից և «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից

համապատասխանաբար ստացել է 511,200.00 ՀՀ դրամ և 972,000.00 ՀՀ դրամ վարձակալության դիմաց եկամուտներ:

6) Անի Հարությունյանը «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի բաժնեմասնակցությունը Հայտարարագրի «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չի հայտարարագրել, մինչդեռ, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Անի Հարությունյանը 2011 թվականի հոկտեմբերի 11-ից հանդիսանում է «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02602819) 100 տոկոսի բաժնետեր:

Նշված արարքներով, երբ Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները ոչ ամբողջական կամ սխալ են ներկայացվում Հայտարարագրում, հայտարարատու պաշտոնատար անձը թույլ է տալիս Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված խախտում:

Հանձնաժողովն իր կողմից կայացված մի շարք որոշումներում արձանագրել է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ արարքը որպես նվազ նշանակության որակելիս էական են համարվել խախտման բնույթը (այն, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ), արարքի որակական կողմը, խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ, ինչպես նաև արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը:

Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Տվյալ պարագայում Անի Հարությունյանն իր կողմից ներկայացված Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում տարեվերջին հայտարարագրել է 1,697,521.00 ՀՀ դրամ և 12,000.00 ԱՄՆ դոլար անկանխիկ դրամական միջոցներ, մինչդեռ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Անի Հարությունյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա է եղել 1,923,318.00 ՀՀ դրամ, 2,333,401.00 ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար և 7,771.00 ԱՄՆ դոլար հաշիվների մնացորդներ: Նշված արարքով վերջինս խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջները, որոնց համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

Անդրադառնալով Անի Հարությունյանի կողմից ներկայացված անկանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության միջև առկա անհամապատասխանությանը, Անի Հարությունյանն իր դիրքորոշմամբ պարզաբանել է, որ 2020 թվականի ընթացքում իր՝ որպես պետական ծառայողի սոցիալական փաթեթի հաշվին փոխանցվել են գումարներ, որոնք տնօրինելու իրավասություն չի ունեցել՝ հաշվից օգտվելու համար համապատասխան բանկին փաստաթղթերի փաթեթ ներկայացնելու նախապայմանի պատճառով (այդ թվում, օրինակ՝ բժշկական զննություն անցած լինելու մասին տեղեկանք և այլն): Դրամական միջոցը տնօրինելու իրավասություն չունենալու պատճառով այդ գումարի չափը չի ներառվել անկանխիկ միջոցների հանրագումարում: Հնարավոր է համարում, որ իր կողմից հայտարարագրած դրամային հաշիվների մնացորդի 1,697,521.00 ՀՀ դրամ և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված տվյալների համաձայն՝ փաստացի առկա

1,923,318.00 ՀՀ դրամ դրամային հաշիվների մնացորդի տարբերությունը պայմանավորված է վերոնշյալ հանգամանքով:

Կարգապահական վարույթի շրջանակներում Անի Հարությունյանի կողմից 2022 թվականի հուլիսի 8-ին և 13-ին ներկայացված գրություններին կից ներկայացվել է իր անվամբ սպասարկվող բանկային հաշիվների վերաբերյալ քաղվածքներ, որոնք Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության առարկա են դարձել:

ՓԲԸ-ում ունեցած N , N , N բանկային հաշիվների, ինչպես նաև ում սպասարկվող և հաշիվների վերաբերյալ N , N քաղվածքների համաձայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ վերջինիս հաշիվներին առկա է եղել 12,236.00 ԱՄՆ դոլար և 698,077.00 ՀՀ դրամ հաշիվների մնացորդներ:

Այսպես, տվյալ դեպքում վարույթի մասնակցի կողմից չեն ներկայացվել ում սպասարկվող քարտային հաշվի, -ում սպասարկվող հաշվի, ինչպես նաև -ում սպասարկվող հաշվի վերաբերյալ քաղվածքներ: Վարույթի մասնակցի կողմից ներկայացված քաղվածքների հանրագումարով արտացոլված վերոնշյալ գումարի չափի և վարույթի նյութերում առկա քաղվածքներով արտացոլված մի քանի հաշիվներում առկա անկանխիկ դրամական միջոցների հանրագումարի միջոցով ձևավորված գումարի հետ համադրության արդյունքում առկա է անհամապատասխանություն՝ 225.797 գումարի չափով, ինչը վերջինիս փաստմամբ հանդիսանում է իր՝ որպես պետական ծառայողի, սոցիալական փաթեթի հաշվին փոխանցված գումար, և հակառակն ապացուցող փաստեր Հանձնաժողովը ձեռք չի բերել:

Անի Հարությունյանը «Գրիար» ՓԲԸ-ում բաժնեմասնակցությունը Հայտարարագրի «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չի հայտարարագրել: Հաշվի առնելով վարույթի մասնակցի այն դիրքորոշումը, որ «Գրիար» ՓԲԸ-ում բաժնեմասնակցությունը Հայտարարագրի «Դ. Հայտարարատու Պաշտոնատար

անձի շահերի հայտարարագիր» բաժնում չի հայտարարագրել, քանի որ վերոնշյալ ընկերությունում բաժնեմասնակցությունն արդեն իսկ ներկայացված է եղել Հայտարարագրի «Բ.3. ***Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում***, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում նշել, որ խախտումը տվյալ դեպքում դրսևորվել է «Գրիար» ՓԲԸ-ում բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալները Հայտարարագրի «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում որպես հայտարարագրման ենթակա տվյալներ չներկայացնելու մեջ: Նշված տվյալները Օրենքով սահմանված առանձին հայտարարագրման ենթակա տվյալներ են և չեն վերաբերվում հայտարարագրման ենթակա տվյալը սխալ ենթաբաժնում լրացվելուն:

Այսպես, Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտարարագրի «**Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում**» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը, տոկոսը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

Այս առումով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ Հայտարարագրի «**Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ**» բաժնում ներկայացվող տվյալները հանդիսանում են այն անհրաժեշտ և համակարգային առումով փոխկապակցված տվյալները, որոնք բավարար են պաշտոնատար անձի հայտարարագրերի պատշաճ վերլուծությունն իրականացնելու համար: Նշվածից բացի, վերոնշյալ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվում է նաև պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվում հանրային հաշվետվողականությունը: Նշվածով պայմանավորված՝ տվյալ խախտումն ունի նվազ

նշանակություն, ինչը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի ուժով նշված խախտման կապակցությամբ վարչական պատասխանատվությունից ազատելու և բանավոր դիտողություն հայտարարելու հիմք է հանդիսանում:

Ինչ վերաբերում է Օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվող Հայտարարագրի «Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում հայտարարատու պաշտոնատար անձի բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տվյալները Հայտարարագրում ներկայացված չլինելուն, Հանձնաժողովը գտնում է, որ գործում առկա բավարար փաստական տվյալներով, մասնավորապես սույն կարգապահական վարույթի շրջանակներում Անի Հարությունյանի կողմից ներկայացված 2019 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում առկա բաժնետոմսի հավատարմագրային կառավարման պայմանագրով հավաստվում է այն, որ «Գրիար» ՓԲԸ-ի բաժնեմասը հաշվետու ժամանակահատվածում (2020 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատված) հանձնված է եղել հավատարմագրային կառավարման, որպիսի պարագայում Հայտարարագրում այն չներկայացնելը չի հանգեցրել նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը, *ինչն իր հերթին* **չի հանգեցրել** *դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:*

Անդրադառնալով Անի Հարությունյանի կողմից Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում բաժնետոմսերի ընդհանուր արժեքի վերաբերյալ հայտարարագրման ենթակա տվյալը սխալ ներկայացնելուն, հարկ է նշել, որ նշված տվյալները, Օրենքով սահմանված առանձին հայտարարագրման ենթակա տվյալներ են:

Այսպես, Օրենքի՝ 40-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորման պահանջն է, որ **արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում տարեկան հայտարարագրում պարտադիր կերպով ներառվեն տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ** արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը՝ նշելով արժեթղթի

տեսակը, **ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի** անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ վերջինս, ինչպես իր բացատրությամբ հայտնել է, բաժնետոմսերի ընդհանուր արժեքը ներկայացնելիս ավել զրոներ մուտքագրելու հետևանքով սխալ արժեք չներկայացնելու նպատակով համակարգի կողմից ներառվող զրոները պակասեցրել է: Դա վկայում է, որ վերջինս բաժնետոմսերի իրական արժեքը թաքցնելու միտում չի ունեցել, ավելին ներկայացրել է արժեթղթերին առնչվող մյուս փոխկապակցված տվյալները, մասնավորապես՝ բաժնետոմսերի անվանական արժեքը և քանակը, ինչպես նաև իր բաժնեմասնակցության չափը: Ավելին բաժնետոմսերի քանակի մասին առկա է տեղեկատվություն նաև վերջինիս կողմից ներկայացված առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում առկա բաժնետոմսի հավատարմագրային կառավարման պայմանագրում:

Տվյալ պարագայում հաշվի առնելով խախտման համար պատասխանատվություն սահմանելու համար էական համարվող վերոնշյալ հանգամանքները իրենց համակցության մեջ, Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ խախտման արդյունքում այնուամենայնիվ արտացոլվում է պաշտոնատար անձի իրական գույքային դրությունը, այս առումով հայտարարագրման ենթակա տվյալները սխալ ներկայացնելու արարքը **չի հանգեցնում** *դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:*

Անի Հարությունյանի կողմից Հայտարարագրի «Գ. 1 Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանձ եկամուտները» բաժնում 2020 թվականին «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից և «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից համապատասխանաբար 511,200.00 ՀՀ դրամ և 972,000.00 ՀՀ դրամ վարձակալությունից ստացված եկամուտները չներկայացնելու առնչությամբ հարկ է նշել, որ Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Անի Հարությունյանը 2020 թվականին «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից և «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից համապատասխանաբար ստացել է 511,200.00 ՀՀ դրամ և 972,000.00 ՀՀ դրամ վարձակալության դիմաց

եկամուտներ, ինչը հաստատված է համարվել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթում, վարույթի մասնակցի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնակարգումների համաձայն՝ իր համար բարենպաստ հանգամանքները հիմնավորող փաստական տվյալների բացակայության պայմաններում:

«Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից ստացված 511,200.00 ՀՀ դրամ վարձավճարի վերաբերյալ տվյալը փոփոխելու թույլտվությամբ Անի Հարությունյանը դիմել էր Հանձնաժողովին, մինչդեռ, Հանձնաժողովը թույլ չէր տվել ուղղում կատարել Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշման 1-ին հավելված հաստատված հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգի պահանջների շրջանակում:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Հանձնաժողովը վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդունքում Օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Անի Հարությունյանին թույլատրել է իր նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին որոշման շրջանակներում Հայտարարագրում կատարել համապատասխան փոփոխություններ:

Ինչ վերաբերում է «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից 972,000.00 ՀՀ դրամ վարձակալության դիմաց ստացված եկամուտը չներկայացնելուն, վերջինս հայտնել է, որ թեև վերոնշյալ ընկերության հետ առկա է եղել վարձակալության պայմանագիր, սակայն «Արս սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից որևէ վարձավճար երբևէ իրեն չի փոխանցվել կամ առձեռն տրվել, ուստի և չէր էլ կարող եկամուտի վերաբերյալ տվյալ ներկայացնել Հայտարարագրի համապատասխան բաժնում:

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում Անի Հարությունյանի կողմից 2022 թվականի հուլիսի 27-ին Հանձնաժողով ներկայացված Մ-3181-2022 գրությամբ վերջինս վերահաստատել է նշված հանգամանքը՝ ներկայացնելով «Արս սիսթեմս» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 2022 թվականի հուլիսի 7-ին տրված N-0722-07 տեղեկանքն առ այն, որ սեփականության իրավունքով Անի Հարությունյանին պատկանող անշարժ գույքի

վարձակալության դիմաց «Արս սիսթեմս» ՍՊ Ընկերության կողմից վերջինիս վարձավճարներ չեն փոխանցվել:

Անդրադառնալով «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալը Հայտարարագրի «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի Դ.1. «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում չներկայացնելուն, Անի Հարությունյանը բացատրությամբ հայտնել է, որ նշված ընկերության գործունեությունը 2014 թվականի ապրիլի 1-ից դադարեցված է եղել հարկային մարմին ներկայացված հայտարարության ուժով և դրանով պայմանավորված իր կողմից Հայտարարագրում համապատասխան տվյալներ չեն ներկայացվել: Նշված արարքով Անի Հարությունյանը խախտել է Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որոնց համաձայն՝ հայտարարագիրը ներառում է կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը, տոկոսը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն: Ինչից հետևում է, որ Օրենքի 42-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի «Շահերի հայտարարագիր» բաժնում պահանջվող տեղեկատվությունը ներառելը *օրենքով նախատեսված առանձին հայտարարագրման ենթակա տվյալ* է:

Վերոնշյալի կապակցությամբ սույն կարգապահական վարույթի շրջանակներում Անի Հարությունյանի կողմից 2022 թվականի հուլիսի 8-ին ներկայացված թիվ Մ-2939-2022 գրությամբ վերջինս փաստել է, որ «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02602819) գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է՝ ներկայացնելով Պետական եկամուտների կոմիտեի 2022 թվականի հունիսի 16-ի թիվ 70-3/41994-2022 գրությունը:

Անի Հարությունյանի կողմից սույն կարգապահական վարույթի շրջանակներում ներկայացված կից փաստաթղթերով, մասնավորապես՝ Պետական եկամուտների կոմիտեից ստացված գրությամբ (2022 թվականի հունիսի 16-ի թիվ 70-3/41994-2022) ներկայացված է, որ «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 02602819) գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է:

Տվյալ պարագայում հիմք ընդունելով այն հանգամանքը, որ թեև ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից 2021 թվականի հունիսի 11-ին ստացված թիվ Մ-836-2021 գրության համաձայն՝ Անի Հարությունյանը հանդիսանում է «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի 100%-ի բաժնեմասի բաժնետեր, այդուհանդերձ վերոնշյալ ընկերության կողմից փաստացի գործունեություն ծավալելու, շահույթ ստանալու վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ, ավելին, նշված ընկերության գործունեությունը դադարեցված է, հետևաբար՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Անի Հարությունյանի կողմից բաժնեմասնակցությունը «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ում Հայտարարագրում Օրենքի պահանջներին համապատասխան չներկայացնելը, ***չի հանգեցրել դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:***

Հաշվի առնելով նշվածը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործում առկա փաստական տվյալներով արդեն իսկ ապահովվում է պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտման իրավական հնարավորությունը, որպիսի պայմաններում Հայտարարագրում Օրենքի պահանջներին համապատասխան ամբողջական տվյալներ չներկայացնելը կամ սխալ տվյալ ներկայացնելը, ***չի հանգեցրել դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:***

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է ներկայացնել գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր

«Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ:

Տվյալ պարագայում Անի Հարությունյանը Հայտարարագիրը չի ներկայացրել «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ, ինչը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Սահմանադրական օրենք) 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով սահմանված դատավորի վարքագծի կանոնի խախտում:

Սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ Դատավորը պարտավոր է պահպանել սույն օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները: **Վարքագծի կանոնները չպահպանելը սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության**:

Սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորին ***կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝*** դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ *դատավորի վարքագծի կանոնները խախտելը,* որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ վարույթ հարուցած մարմինը կարճում է կարգապահական վարույթը, եթե՝ ***առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.***

Սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***արարքը չի համարվում կարգապահական խախտում,*** *եթե այն,* ***թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ,*** *սակայն իր* **նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը**:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավական կարգավորումները՝ Հանձնաժողովը, կարգապահական վարույթներում էական է համարում անդրադառնալ գործի նյութերով

հաստատված խախտման որակական կողմին և գտնում է, որ այն պետք է գնահատման ենթարկել օրենքի ձևական և բովանդակային տեսանկյունից, որպեսզի պահպանվի *կիրառվող օրենքի և դրանով հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ հարաբերակցությունը*:

Այս առումով, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված՝ *դատավորների կողմից ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականության ապահովման և պատասխանատվության համաչափության վերաբերյալ դրույթներին:* Այսպես, 2005 թվականին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (ՀՀԱԳՆՊՏ 2008.02.11/9(17), որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 7-ին:

Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվի առնելով դատական իշխանության անկախությունը և կոռուպցիայի դեմ պայքարում նրա որոշիչ դերը՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան և առանց դատական մարմինների անկախությանը վնասելու, պետք է միջոցներ ձեռնարկի դատական մարմինների աշխատակիցների ազնվության մեծացման ուղղությամբ և նրանց շրջանում կոռուպցիայի հնարավորությունները բացառելու համար: Այդպիսի միջոցները կարող են ներառել դատական մարմինների աշխատակիցների գործողություններին վերաբերող կանոնները:

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի ուղեցույցի համաձայն՝ դատավորների կողմից ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականությունը զարգացող միտում է և նպատակ ունի հասցեագրել շահերի բախման, յուրացման կամ ապօրինի հարստացման խնդիրները (տե՛ս ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի «Հոդված 11-ի կիրառական ուղեցույց և գնահատման շրջանակ», կետ 44[1]):

[1]https://www.unodc.org/res/ji/import/programmes_projects_initiatives/the_united_nations_convention_against_corruption_implementation_guide/the_united_nations_convention_against_corruption_implementation_guide.pdf

Գույքային դրության վերաբերյալ ամբողջական տվյալների ներկայացումը Վենետիկի հանձնաժողովի կողմից կոռուպցիայի կանխարգելման գործում դիտարկվել է որպես արժեքավոր զենք (տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) CDL-AD(2014)008, 24 մարտի, 2014 կարծիք No. 712 / 2013): Կարևորելով ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի վերաբերյալ հաշվետվողականությունը՝ Վենետիկի հանձնաժողովն անդրադարձել է նաև ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի հայտարարագրման պարտավորության չկատարման դեպքում ***պատասխանատվությանը և դրա համաչափությանը:*** Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի հայտարարագրման պարտավորության չկատարումը պետք է առաջացնի այնպիսի պատասխանատվություն, որը կարող է ծառայել կոռուպցիան զսպելու նպատակին: Բացառություն կարող է կիրառվել *հայտարարագրում մանր և ոչ դիտավորյալ բացթողումներ ունենալու համար*, սակայն հայտարարագիր չներկայացնելը բավարար լուրջ խախտում է, և կարող է հանգեցնել պաշտոնից ազատման (Վենետիկի հանձնաժողով CDL-AD(2015)042, 21 դեկտեմբերի, 2015 կարծիք No. 825/2015):

Վերոշարադրյալ փաստական և իրավական հիմքերն ու հիմնավորումները հաշվի առնելով՝ Հանձնաժողովն ընդգծում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հայտարարատու անձի կողմից Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա, մինչդեռ, հայտարարատու անձի կողմից չներկայացված տվյալները չեն հանգեցնում պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման նկատմամբ հսկողության ապահովման, խախտումների հայտնաբերման, հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտման իրավական հնարավորության բացակայության, ինչպես նաև, ըստ էության, ***արտացոլում են պաշտոնատար անձի իրական գույքային դրությունը***, այս առումով հայտարարագրման ենթակա տվյալները չներկայացնելու արարքը չի հանգեցնում *նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը*, **հետևաբար նաև՝ *դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման:***

Հաշվի առնելով վերոնշյալ իրավանորմերի բովանդակությունը և հիմք ընդունելով վարույթում հաստատված հանգամանքները՝ Հանձնաժողովը ***եզրահանգում է,*** որ Հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պահանջներին համապատասխան չներկայացնելու արարքի կապակցությամբ Անի Հարությունյանի նկատմամբ 2022 թվականի մայիսի 27-ի հարուցված թիվ ԿՎ/14/2022 կարգապահական վարույթում առկա չէ վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ վարչական դատարանի դատավոր Անի Հարությունյանի նկատմամբ 2022 թվականի մայիսի 27-ին հարուցված թիվ ԿՎ/14/2022 կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի բացակայությամբ:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Անի Հարությունյանին, Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին և ՀՀ արդարադատության նախարարին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**